

ՍՕՅԻՍԼՕԳԻԿԵԼՆ ՄԻՋՆՂԳՈՑԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Յալաւնի է թէ ժամանակակից կեանքում ինչ մեծ կարեւորութիւն են ստացել ընդհանրապէս ընկերութիւնները և կօնգրէսները. իսկ մասնաւորապէս գիտական ընկերութիւնները և կօնգրէսները ներկայումս այնպիսի մի կարեւորութիւն են ստացել գիտութեան համար, որպիսի կարեւորութիւն չունէին նրանք հին ժամանակները, երբ մի մտածող, մի փիլիսոփայ իւր առանձնութեան մէջ անհատական ուժով և տաղանդով աշխատում էր գիտութիւն մշակել. այն ինչ ալժամ գիտութիւնը մշակւում է հաւաքական ուժով խիստ քննութեան և հետախուզութեան ենթարկելով անհատ գիտնականի որեւէ գիւտը կամ հիպօթէզը: Բազմաթիւ են գիտական ընկերութիւնները, և ալժամ, ինչպէս տեսնում ենք, գրեթէ ամեն տարի տեղի ունին եւրոպական երկիրներում գէօլօգների, մարդաբանների (անթրօպօլօգների), նատուրալիստների, հնագէտների և այլն գիտական կօնգրէսներ: Սակայն մինչև վերջին ժամանակները բնաւ սօցիօլօգների կօնգրէս տեղի չէ ունեցել և գոլութիւն չունէր սօցիօլօգների մի միջազգային ինստիտուտ, ընկերութիւն Եւրոպայում:

Հինգերորդ տարին է ինչ որ արդէն հիմնուել է ալգպիսի մի ընկերութիւն Պարիզում «Սօցիօլօգների Միջազգային Ինստիտուտ» անունով, որը ունեցել է արդէն մի քանի անգամ կօնգրէսներ: Հալ հասարակութեան մեծամասնութեան անլալտ լինելով ալգ ընկերութիւնը՝ տալիս ենք ալստեղ մի քանի տեղեկութիւններ նրա սկզբնաւորութեան և գործունէութեան մասին:

Եթէ ի նկատի ունենանք ալն հանգամանքը, որ սօցիալական խնդիրները զբաղեցրել են միշտ հին փիլիսօփաներին և ժամանակակից գիտնականներին և թէ ալս կամ ալն հասարակական գործիչ թէ հրապարակալսօս խարխալեւում մտքի քալօսի մէջ իրան անհատական արամագրութեան նալած՝ աշխատել է հետեւել ալս կամ ալն մտածողի սօցիալական վարդապետութեան, սակայն հասել է ալժամ ժամը, երբ սօցիալական գիտութիւնը զրական որոշ հիմունքների վրալ գրումս տեսնելով, ալլես ալսուհետեւ անհնարին է սրան

նրան խորխափել մտքի քալօսի մէջ և որ աւելի կարեւորն է, ալլես անհնարին է մտքի կամալական հարստահարութիւն ժամանակակից գիտունի կողմից իրան նման անդէտին: Սօցիալական գիտութեան շէնքը աւարտուած չէ, նրա հիմքը արդէն դրուած է. ալդ հիմքը կազմում են Օգիւստ Կօնտի «Պօզիտիւ փիլիսօփալութիւնը», Գարվինի Բիօլօգիան, Սպենսերի էվօլյուսիօնիզմը և Մարքսի տնտեսական դէտէրմինիզմը: Այժմ մնում է գիտութեան մշակներին շարունակել կիսաւարտ շէնքի կառուցումը: Հէնց ալդ վսեմ նպատակին նուիրուած ենք տեսնում վերջերս Պարիզում հիմնուած սօցիօլոգների վերողիշեալ միջազգային ընկերութիւնը: Ալդ նշանաւոր ընկերութիւնը առանձնապէս գրաւել է դէպի ինքը վերջին ժամանակները բոլոր երկիրների սօցիօլոգների ուշադրութիւնը և նա խոստանում է շատ բնօրինակ լինել սօցիալական գիտութեան համար:

Նա հիմնուեց Պարիզում 1893 թւին Յուլիս ամսում: Նոյն թւի Յունիար ամսից արդէն սկսեց հրատարակուել «Revue Internationale de Sociologie» վերնագրով ամսօրեայ հանդէսը, խմբագրութեամբ սօցիօլոգ Բընէ Վօրման և հրատարակութեամբ «Giard et Briere» լալտնի գրաւաճառ Փիրմայի, որը համարվում է վերողիշեալ ինստիտուտի օրգանը. սրան աշխատակցում են աշխարհիա լալտնի սօցիօլոգ գիտնականներ: Հետեւեալ 1894 թւի հոկտեմբեր ամսին ինստիտուտը ունեցաւ իւր առաջին կօնգրէսը Պարիզում, նախագահութեամբ Զօն Լիւրօի. փոխ-նախագահներն էին—Լէնրիկօ Ֆէրրի, Ժակ Նօվիկօվ, Ալֆրէդ Երֆէ, Գարրիէլ Տարդ և քարտուղար՝ Բընէ Վօրման:

Նրկորդ կօնգրէսը տեղի ունեցաւ զարմեալ Պարիզում 1895 թւի Սեպտ.-Հոկտ. ամիսներին: Ինստիտուտի ալդ տարուալ Բիւրօն կազմուած էր ալսպէս. նախագահ Ալբերտ Երֆէ (որը հիւանդութեան պատճառով անկարող եղաւ ներկայ գտնուել կօնգրէսին և նախագահեց Մաքսիմ Կօվալէվսկի), փոխ-նախագահներ՝ Գուգլաս Գալտօն, Լուի Գումպլօվիշ, Մաքսիմ Կօվալէսկի, Եարլ Լետուրնօ և զլխաւոր քարտուղար Բընէ Վօրման. քարտուղարի օգնականներ ինստիտուտի երկու գործակիցներ (associés) Ֆրանսուա դը Տէլաներ և զանձապահ Ալֆրէդ Բօնէ:

1896 թւին կօնգրէս տեղի չունեցաւ և սակայն հրատարակուեց ինստիտուտի անդամների աշխատութիւնների տարեգրութիւնը: Բիւրօի կազմութիւնը հետեւեալն էր. նախագահ՝ Ալֆրէդ Ֆօլլէ, փոխ-նախագահներ՝ Գիւմբրոինդօ դը Աղկարատ, Լէօնար դը Կուրտնէի, Պօլ դը Լիլիէնֆիլդ, Կարլ Մէնժէր, զլխաւոր քարտուղար՝ Բընէ Վօրման և ալլն:

1897 թւի Յուլիսին տեղի ունեցաւ երրորդ կօնգրէսը: Նախագահն էր՝ Պօլ դը Լիլիէնֆիլդ (առսաց սենատոր), փոխ-նախագահ-

ներ-լուիս Բրէնտանօ, Ալֆրէդ Էսպինաս, Սիւր Բօքէրտ Ժիֆէն, Ֆրանսիական Ժինէր զը լօ Բիօ և զլիւ. քարտուղար Բընէ Վօրմա:

Ներկայ 1898 թւին ենթադրուած է չորրորդ կօնգրէսը և նոր Բիւրօն, որ արդէն սկսել է իւր պաշտօնավարութիւնը, կազմուած է հետեւեալ անձինքներէց. — նախագահ՝ Գիւմենրաինդօ զը Ազկարատ, փոխ-նախագահներ — Ժ. Է. Կօնրադ, Բարօն Բաֆայէլ Գարօֆալօ, Ալզօֆ Պրինս, Հենրի Սիդզվիկ և զլիւ. քարտ. Բընէ Վօրմա և ալլն:

Ինստիտուտի տարեգրութիւնը տարէցտարի հրատարակուած է առանձին գրքով. երեք զիրք արդէն լուս է տեսել և շուտով չորրորդը լուս կտեսնի: Այդ նշանաւոր հրատարակութիւնները ներկայացնում են սօցիալօգիայի համար թանգազին գանձ: Թէ ալ գրքերի և թէ ընդհանրապէս ինստիտուտի գործունէութեան մասին ալլանդաւ համառօտ հաշիւ կներկայացնեմ. իսկ ալժմ, ընթերցողին աւելի մօտ ծանօթացնելու համար ինստիտուտի նպատակի և պրօգրամի հետ, ստորև առաջ եմ բերում այն միջանի կանոնները, որոնցով նա առաջնորդուած է:

Յօդ. 1. Սօցիալօգիայի Միջազգային ինստիտուտի նպատակն է համախմբել զանազան երկիրների սօցիալօգներին սօցիալական խնդիրների հաւաքական ուսումնասիրութեան համար:

Յօդ. 2. Նա կարող է ունենալ մինչ հարիւր իսկական անդամ և երկու հարիւր գործակից անդամ (associé):

Յօդ. 3. Իւրաքանչիւր տարի ինստիտուտը համաժողով (կօնգրէս) է հրաւիրում որեէ քաղաքում: Փաղաքը նշանակուած է հերթով և ընտրութեամբ, ըստ կարելոյն զանազան երկիրներում: Համաժողովները կարող են նախելով կարիքին աւելի շուտ նշանակուել և կամ լիտաձգուել:

Յօդ. 4. Համաժողովը լսում է և վիճաբանութեան է ենթարկում ինստիտուտի իսկական և գործակից անդամների զրուած զեկուցումները սօցիալօգիական հերթական խնդիրների մասին: Նա ընտրում է ինստիտուտի իսկական գործակից անդամներ և նշանակում է լաջորդ տարուան համար բիւրօ: Իսկական և թէ գործակից անդամները մասնակցում են կօնգրէսին և կօնգրէսի նիստերի ընթացքում տեղի ունեցած վիճաբանութիւններին: Փութարկութեան և ընտրութիւններին իրաւունք ունին մասնակցելու միայն իսկական անդամները:

Յօդ. 5. Ինստիտուտի Բիւրօի անդամները կազմում են. — մի նախագահ, չորս փոխ-նախագահներ և մի զլիսաւոր քարտուղար: Նրանք ընտրուում են, ըստ կարելոյն, զանազան ազգերից: Նրանց պաշտօնավարութիւնը տևում է մի տարի, բացի զլիս. քարտուղարից, որը ընտրուած է տաս տարի ժամանակով:

Յօդ. 6. Ինստիտուտը ամեն տարի հրատարակում է գրաւոր աշխատութիւնների մի ժողովածու, որը պարունակում է այն գրութիւնները, որոնք զեկուցուած են համաժողովին և թէ այն վիճաբանութիւնները, որոնք տեղի են ունեցել նիստերի ընթացքում: Ժողովածուի մէջ կարող են տպագրուել նորնպէս Բիւրօի որոշմամբ սօցիօլօգիային վերաբերեալ այնպիսի աշխատութիւններ, որոնց հեղինակը ինստիտուտի անդամ է կամ գործակիցը և որոնց մասին ընաւ համաժողովին զեկուցուած չէ եղել: Ժողովածուն վաճառ կը հանուի Բիւրօի և հրատարակիչների փոխադարձ համաձայնութեամբ նշանակուած գնով: Այն անդամը կամ գործակիցը, որը վերջին համաժողովին որեւէ գրաւոր զեկուցումն է արել, ստանում է ձրիապէս ժողովածուի մի օրինակը:

Յօդ. 7. Գերմաներէն, անգլիերէն, ֆրանսերեն և իտալերէն լեզուները կարող են ընդունուիլ վիճաբանութիւնների ժամանակ համաժողովում և թէ նախ լեզուներով աշխատութիւններ տարեկան ժողովածուի համար:

Յօդ. 8. Ինստիտուտի ծախքերը ծածկելու համար ինստիտուտի անդամները վճարում են քսան ֆրանկ, իսկ գործակիցները տասը ֆրանկ մուտքի համար:

Յօդ. 9. Ինստիտուտի կենդրոնատեղն է Փարիզը:

Դէորդ Ղառաշեանց